ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

10.03.2014թ. կնքված ՈԳՍՎԿ-14/2-ՇՀԱՊՁԲ-11/4-5 ծածկագրով գնման պայմանագրում

փոփոխություն կատարելու մասին

ք. Գյումրի «26» դեկտեմբեր 2013թ.

<<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> ՓԲԸ, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Վալիկո Ներգաձեի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) , մի կողմից և «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Ասատրյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, (այսուհետև՝ Կողմեր),ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով միմյանց միջև 10.03.2014թ. կնքված ՈԳՍՎԿ-14/2-ՇՀԱՊՁԲ-11/4-5 ծածկագրով գնման պայմանագրի 9.1;9.3 կետերը և ՀՀ կառավարության 10փետրվար 2011թ-ի N168-Ն որոշման 67.1կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Միչև պայմանագրի գործողության ավարտը սահմանված քանակի Ապրանքները ամբողջությամբ չմատակարարվելու պատճառով, **ֆինանսական միջոցների նվազեցման** հիմքով ՈԳՍՎԿ-14/2-ՇՀԱՊՁԲ-11/4-5 ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետում նշված Ապրանքի ընդհանուր գինը ՝ 5 696269ՀՀ դրամը համարվում է մասնակի լուծված՝ 2 392 920.7 ՀՀդրամ չմատակարարված ապրանքների մասով:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 07.04.2014թ. կնքված ՈԳՍՎԿ-14/2-ՇՀԱՊՁԲ-11/4-5 ծածկագրով գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ՝	ՄԱՏԱԿԱՐԱՐ՝
«Սամարիթեր վերականգնողական կենտրոն» ՓԲԸ	<<Նատալի ֆարմ>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Գյումրի, Մանուշյան 8	ք.Երևան, Տիչինայի 3-րդ նրբ,2/2
Բանկ՝ «Առէկսիմբանկ Գազպրոմբանկի խումբ»,	<<ԱմերիաԲանկ >> ՓԲԸ
Հ/Հ 2380018001640100	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 05500936	ՀՎՀՀ 01222567
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ